


ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԻ
ՆԱԽԱԳԻԾ-ԿՈՆՍՊԵԿՏ

- Պատմության ծրագրի նախազծի կիրառման
յեվ յեղած դասուցքերով պարապելու մասին
- Հին դարի պատմություն
- Միջին դարի պատմություն
- Միջին դարի վերջը յեվ անցումը նոր ժա-
մանակների

ՀԱՍՏԱՏՎԱԿ Ե ՀՅԱՀ ԼՈՒՍՁՈՂԿՈՄԱՏԻ ԿՈԴԵՔՏԻ



ՀԱՅՀ ԼՈՒԺԱԴԿՈՄԱՏ

ԳՐԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

9(ա)

ՏԵ-39

ար.

23 JUN 2005

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԻ
ՆԱԽԱԳԻԾ-ԿՈՆՍՊԵԿՏ

1007
31367

3692

1. ՊԵՏՐՈՎԻԹՅՈՒՆ ՖՐԱՌԻ ՆԱԽԱԳԻԾԻ ԿԻ-
ՔԱՐՄԱՆ ՑԵՎ ՑԵՎԸ ԳԵՍԵՆ-ՔԵՐՈՎ
ՊԵՐՍՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԻՆ ԳԵՐԻ ՊԵՏՐՈՎԻԹՅՈՒՆ
3. ՄԻԶԻՆ ԳԵՐԻ ՊԵՏՐՈՎԻԹՅՈՒՆ
4. ՄԻԶԻՆ ԳԵՐԻ ՎԵՐՋ ՑԵՎ ԱՆՑՈՒՑ
ՆՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԱՅՀ ԼՈՒԺԱԴԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ.

ԼՈՒՂԱՐՔԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1934



ՀԱՅՀ-ՀՍՊՀ
Ա. Ալեքսանդր Ա. Ալեքսանդր

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԿՐՍՌՄԱՆ ՅԵՎ
ՅԵՂԱՇ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ ՊԱՐԱՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հրապարակվում ե պատմության նոր ծրագրի նախագիծը, առայժմս միայն 5, 6 և 7-րդ դասարանների համար. մնացյալ դասարանների (8, 9, 10-րդ) համար գործադրության մեջ մնալու յե անցյալ տարի տպագրված ծրագիրը մինչև նորի հրապարակումը: Նույնը պետք է ասել նաև ԽՍՀՄ-ի գաղութային և կիսագաղութային ժողովրդների և Հայաստանի ու Անդրկովկասի պատմությունների ծրագրերի մասին, վորոնք համապատասխան կարգով ընդունվելուց հետո պարբերաբար պետք է հրատարակվեն: Մինչ այդ պետք է զեկավարմել գարձյալ անցյալ տարվա պատմության ծրագրի ԽՍՀՄ-ի և Հայաստանի պատմության հավելվածներուն: Պատմության նոր ծրագրին, այն փաստաթուղթն ե, վորը հրապարակվեց «Յա Կոմ. Պրօվեն.» իբրև նին աշխարհի և Միջին դարերի համար կտղմվելիք դասագրքերի նախագիծ կոնսալեկտը, վորով և գործի յե վերածվում Համկոմկուսի մայիսի 16-ի վորոշումը պատմության և աշխարհագրության դաստվանդման մասին: Այս կապակցությամբ անհրաժեշտ են նշել, վոր առաջին անգամն ե, ինչ մեր գպրոցներին տրվում ե այսպիսի մանրամասն ու բազմակողմանի ծրագրի, յերբ չոր ու ցամաք սոցիոլոգիական սխեմաների վոխարեն մեր աշակերտը ձեռք ե ըերում պատմական գիտելիքների համեմատական լրիվ ըմբռնում, բազմակողմանիորեն ծանոթանում պատմական դեպքերի և դեմքերի հետ, յուրացնում պատմական խրոնոլոգիայի և դեպքերի համըորդականությունը: Այսինչ հրապարակի վրա

յեղած և առայժմու մինչև 35—36 ուս. տարին իրեւ
հիմնական դասագրքեր գործադրվելու յեն նախկին
ծրագրով լույս տեսած դասագրքերը (Նիկոլսկի, Կու-
կովսկի-Ծրախտեմբերգ, Եֆիմով և Ֆրեյբերգ), (Հաշ-
ված Պակրովսկու «Թուսաց պատմության ուրվագիր-
ծը»), վորոնք դեռ չեն համընկնում նոր ծրագրին. ըստ
վորում նոր ծրագրով (5, 6 և 7 դասագաններում) պա-
րապելու համար անհրաժեշտ ե պահանջվող նյութը
լրացնել այլ աղբյուրներից, գլխավորապես Վիպերից,
ոգտագործելով նրա պատմական խրոնոլոգիան և դեպ-
քերի նկարագրությունը:

Բացի Մ.Ն. Պակրովսկու «Համառոտ ուրվագիր-
ուսաց պատմության» դասագրքից (վորի մասին,
գեռ իր ժամանակին Վ. Ի. Լենինը Մ. Ն. Պակրով-
սկուն գրած նամակում արել է իր նշանավոր և արժե-
քավոր գիտողությունը, վորոնք կուսակցության վեր-
ջին վորոշումների հետ դարձան մեր դպրոցական աշ-
խատանքների և առհասարակ պատմության Փրոնտի
վերակառուցման հիմնաքարը), պատմության մնացած
դասագրքերը բաց թողնվեցին միայն մի տարվա հա-
մար, հնարավորություն տալով ստուգելու նրանց
դպրոցների մասսայական պրակտիկայի բովում. —
դրանք են՝ 1. 5-րդ դասարանի պատմության կուրս՝
ակադեմիկ Նիկոլսկի — Մինչ դասակարգային հասարա-
կություն, Հին Արևելքը, Անտիկ աշխարհը. 2. վեցե-
րորդ և յոթերորդ դասարանների համար՝ Ա. Կուկով-
սկի և Ռ. Տրախտեմբերգ. — Գեղարվալիզմի եպօխան. 3.
8-րդ դասարանի կուրս՝ Ա. Յեֆիմով և Ն. Ֆրեյբերգ. —
Արդյունաբերական կապիտալիզմի եպօխան. 9-րդ դա-
սարանի կուրսի՝ իմպերիալիզմի և արտեխտարական հե-
ղափոխության եպօխայի դասագիրքը լույս չտեսավ:

Անցնող տարեշրջանում վերոդրյալ դասագրքերի
կապակցությամբ ինչպես Թուսաստանում նույնպես և
մեղ մոտ մեթոդական բյուրոներից, ուսուցչական սե-
մինարներից և առանձին դասատուներից ստացված են

բաղմաթիվ դիտողություններ ու կարծիքներ, վորոնք
վերաբերում են նրանց ինչպես հիմնական կառուց-
վածքին, բնույթին, նույնապես և լեզվամանկավար-
ժական խնդիրներին: Ամփոփելով յեղած բոլոր դիտո-
ղություններն ու գնահատականները, հետևյալ հիմնա-
կան սխալներն ու թերությունները կարելի յեն նշել,
վորոնք անհրաժեշտ են նկատի ունենալ այս տարվա ու-
սուցման ընթացքում:

1. Ակադեմիկ Նիկոլսկու դասագիրքը, չնայած իր
անպայման մի շարք նվաճումներին, զերծ չե խոչոր թե-
րություններից: Նախ այն կարծեք ավելի շուտ կազ-
մված և մեծահասակների և վոչ թե 12—13 տարեկան
5-րդ դասարանի աշակերտների համար: Այս դասա-
գիրքն ինչպես իր ստորաբաժանումներով, նույնպես
և այդ առթիվ տրված բացատրություններով չի համա-
պատասխանում 5-րդ դասարանի աշակերտների ու-
նակություններին. որինակ այն գլխում, վորտեղ խոս-
վում է լեզվի, խոսքի ծագման մասին (այն ձևով ինչ
ձևով դրված ե) ամենեին անհրաժեշտ չեր բերել մարք-
սիզմի կլասիկների կարծիքը լեզվի ծագման մասին, ա-
ռավել ևս խոսել Մատի Հարեթական թեորիայի մասին:

2. Դասագրքում պատմական խոչըրագույն դեպքե-
րի մասին չկան կենդանի և հետաքրքիր նյութեր, յե-
ղածն ել պատմվում է շատ չոր ու ցամաք ձևով, — ինչ-
պես որինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացու, Կյուրոսի,
Գրակըս յեղբայրների մասին խոսում է միայն շատ
թռուցիկ և խմբի ջիալոց. 3. դասագրքի լեզուն չունի
պատկերավոր դեղարվեստական վոճ, պատմելու ձեր
կենդանի և հետաքրքիր չե, և վերջապես կան անհամա-
պատասխան և անհաջող նկարներ. որինակ իրեն նմուշ
յեղիպտական գյուղացիական շարժման տրվում ե Փեո-
դալների միջև յեղած պայքարն արտահայտող նկա-
րը, փոխանակ վառ գույներով վեր հանելու գյուղացի-
ների վրա բարդված պարտավորությունները (կոռը,

բեգյառը): Դասագրքում բացակայում եւ Զինաստանի քարտեղը:

3. Յեթե ակադեմիկ Նիկոլսու դասագիրքն ընդհանուր առմամբ ընդունելի յե համարվում, ապա կուկովսկու և Տրախտեմբերգի դասագիրքն արժանանում ե ընդհանուրի բացասական զնահատականին: Յեզ այս միանդամայն տեղին եւ իրավացի: Բոլորի կողմից ասվող և արդեն անառարկելի դարձող առաջին դիտողությունն այս գրքի մասին այն ե, վոր նա վոչթե կոնկրետ յերկրների պատմության և վերաբերում, այլ շարադրում ե յելլուպական Փեոդալիզմի սիեմատիկ կուրսը, ըստ եյության մնալով հասարակական ձեերի զարդացման պատմությունն, արտահայտելով սոցիոլոգիական դպրոցի հիմնական գիծը: Մի շարք կարեորագույն դեպքեր և պատմական իրերազրությունները արված են ամենաընդհանուր ձեռվ, առանց կոնկրետ հիմնավորման. այսպես որինակ սովորողների համար հայտնի չի դառնում թե վորտեղից և ինչպես առաջ յեկան Փեոդալական Անդլիան և Ֆրանսիան, իսկ մի շարք յերկրներ բոլորովին բացակայում են, կամ նրանց մասին խոսվում ե միայն ընդհանուր տկնարկով,— ինչպես որինակ Բալկանյան և Սկանդինավյան թերակղու յերկրները, Ոսմանյան պետությունը, Արարիան: Միանդամայն բարդ և տվյալ դասարանների աշակերտների համար անհասկանալի ձեռվ են շարադրված քաղաքներում տեղի ունեցող դասակարգային պայքարի դրվագները, մասնավորապես չոմպիների ապստամբությունը ֆլորենցիայում: Անբավարար ե տրված «Ազատությունների մեծ խարտիայի» փաստական կողմը. նույնքան բարդ ու խճճված ձեռվ ե խոսում նաև կապիտալի նախասկզբնական կուտակման մասին: Վերջապես այստեղ ավելի քան նախորդ գրքում լեզուն բարդ է, ծանր, սիեմատիկ, չոր ու անկենդան: Իսկ յեթե սրա վրա ավեացնենք նաև հայերեն թարգմանության ստեղծած հավելյալ դժվարությունները՝ լեզմի

Հնամբությունը և այլն, ինքնին հասկանալի կդառնա այն գրությունը, վորի մեջ ընկնում են այս դասագիրքն ողտագործողները:

Իրեւ հիմնական թերություն Եֆիմովիկի և Ֆրեյբերգի դասարաքի՝ նշվում ե նրա ընդհանուր և համեմատական վերացական բնույթը, գերազանցորեն եպոխայի գաղաթնային հաջոցերի լուսաբանմամբ բավարարվելը և դեմքերի ու վորոշ դեպքերի (որինակ 1848—49 թթ. Հեղափոխությունների, Փարիզյան կոմունայի) թույլ փաստարկումը:

Բայց յեթե մեր ուսուցչության հիմնական մասսան ձիւտ մոտենար դասագրքերին և ձիւտ ու սիստեմատիկ աշխատեր նրա վրա դպրոցում, ապա այնուամենայնիվ Հնարավոր կլիներ այս կամ այնտեղ, այս կամ այն գործում կատարված սիստեմին վերահսու լինել: Այս ուղղությամբ կատարված սիստեմերը հիմնականում յերկու խմբի կարելի յե բաժանել:

Առաջին սիստեմ այն ե, վոր դասատուներից վոմանք հանձին գործածության դրվող նոր դասագրքերի մանկավարժական պրոցեսում տեսան իրենց դերի ու մասնակցության կրծատումը և իրենց աշխատանքի հիմքը դարձրին միայն տվյալ գիրքը, կենտրոնացնելով դրա շուրջը վոչ միայն աշակերտի տնային և դասարանական աշխատանքները, այլև իրենց գիտելիքները սահմանափակեցին գրանով, մնալով գերազանցորեն տվյալ գրքի սահմաններում, պաշտպանելով նրա և ձիւտ և սիստեմի բավականմաները, զանց առնելով նրա թերությունները: Ի՞նչին հանգավ այդ պրակտիկան: Այս հանգավ այն բանին, վորի մասին լենինը դեռ տարիներ առաջ զգուշացնում եր՝ ինքնահոսի: Մնալով ինքն իրեն աշակերտությունը գնաց ամենահեշտ գիմադրության հանապարհով, գրքի ամբողջ բովանդակությունը միայն մեխանիկորեն յուրացնելով: Մնալով առանց զեկավարի, առանց բացարողի, հիմնավորողի ողնության, երբախտին թողնված և կամ այս ձեռվ միայն «ինքնու-

բույն» աշխատող աշակերտը չեր կարող պարզել իր համար գլխավոր հարցերը, խուսափել մանրամասնություններից և ձեռք բերել ճշգրիտ ըմբոնում թեկուղ պատմական եյտական խնդիրների մասին։ Բացի այդ, աշակերտության կողմից մեխանիկորեն յուրացվող և մեծ մասամբ միայն հարց ու պատասխանի ձևով ստուգվող նյութը մոռացվում եր ամենակարճ ժամանակում։ Այսպիսով պատմական առարկան, վորը պիտի դառնար աշակերտի աշխարհաըմբուման կարեռագույն դործոնը զրկվում եր իր առաջատար դերից և նման «մեթոդամշակման» հետեանքով համում բացասական հետեանքների։ Ինչ խոսք, վոր այս ձեր ամելի քան դատապարտելի յեղանում, յեթե այն գործադրվում ե մանավանդ 5, 6 և 7-րդ դասարաններում, ուր աշակերտությունը գեռ ըստեյության ինքնուրույն աշխատանքի լիովին ընդունակ է։ Այս ձեւի մեթոդամշակման ամենալատ տեսակն ե հանդիսանում աշակերտի դասարանական տետրում դասագրքերից կատարված արտագրությունը, վորի ողնությամբ վերջինս դասարանում պատմում ե համարյա թե անդիր սերտած իր դասը։

Յերկրորդ սխալն արդեն հանդիսանում ե առաջինի կատարյալ հակադրությունը։ Այս գեպքում արդեն դասատուների մի այլ կատեգորիա, — վախենալով, վոր աշակերտաներին կապելով միայն գրքին, մղելով նրան ինքնուրույն աշխատանքի ինքը կարող ե մեղադրվել դատապարտված լարարատոր մեթոդների դորժադրման մեջ, — դիմում ե գերազանցորեն պատմողական ձեխն, փորձ ե անում իր յերկար ու բարակ զրուցների, իր կազմած կոնսպեկտի և այլ դիտողությունների միջոցով մշակել դասը. այսպիսով ժամանակի մեծ մասն անցնում ե անողուտ նյութերի թելագրությամբ։ Այս ձեւի աշխատանքի որինակ կարող են ծառայել պատմության դպրոցական տետրակները, վորտեղ հաճախակի դուք կարող եք հանդիպել գեմքերի, դեպքերի յերկրորդական այնպիսի մանրամասնությունների, վորոնց մեջ

այսու-ամենայնիվ բացակայում ե դասակարգային հիմնական գիծը։

Վորտեղ պետք ե փնտուել դասագրքի այսպիսով աննպատակահարմար և սխալ ոգտագործման, մեթոդական սխալ մոտեցման հիմնական պատճառները։ Այս յերեւույթի հիմնական պատճառը նախ և առաջ մեր պատճության դասատուների զգալի մասի ունեցած պատմական թերի կրթությունն ե, յերկրորդ պատմության դասագրքի գերի ու նշանակության և դասագրքի ծրագրի հետ ունեցած որդանական կապի չըմբոնումը։

Ինչպես նկատեցինք վերեւում դասատուների մի մասը փաստորեն ծրագիրը փոխարինեց դասագրքով։ Նրանք ոկացին պատմության դասերը կառուցել բացառապես դասագրքով, ըստ վորում պատմական պրոցեսի կարեռագույն անցքերը գուրս ընկան մշակումից կամ փոխարինվեցին յերկրորդական մանրամասներով։ Մինչդեռ ծրագիրն ե, վոր նշում ե պատմական պրոցեսի ուղղությունը, դասատուներին մատնանշում զլիսավոր ուղղեցուները։ Խոկ դասագրիքն այս բազայի վրա շարադրում, կոնկրետացնում և պատմական պրոցեսը, տալիս նրա փաստական կողմը և այդ բոլորի հիման վրա միայն հանդում ընդհանուր յեղբակացությունների, վորոնք բաց են անում ծրագրային կետի փակագծերը և ծավալուն դարձնում նրա համառոտ ընորոշումները. ըստ վորում ծրագրի հիմնական դիրքավորումից յեւնելով ե, վոր պետք ե բաժանել դասագրքի նյութերը։ Ահա թե ինչու հոկայական նշանակություն ունի դարրցական պատմության դասավանդման համար ուսուցչի պատմածը, վորի ընթացքում նա ծանոթացնում ե աշակերտներին՝ ավյալ պատմական պրոցեսի զեկավար գեպքերին, պատմական վեթխարի շղթայից սուանձնացնում, ջոկում ե հիմնական և կարենոր իրերադրությունները, — այսինքն պատմական այն առանցքը, վոր հարավորություն ե ընձեռնում ըմբոնել ավյալ ամբողջ պատմական պրոցեսը։ Խոկ այսպիսի դաս կամ զրույց

մշակելու համար դասաւուն պարտավոր և ուսումնա-
սիրել ծրագիրն ու դասագիրքը (մինչդեռ ինչպես հե-
տազոտությունները պարզել են, նույնիսկ ուսումնական
տարեվերջում մեր մի շաբաթ գլորոցների պատմության
դասաւունները ծրագրի յերեսը չեն տեսել, անգամ այն
չեն թերթել), ապա ինքնուրույն կերպով մշակել, ու-
սումնասիրել տվյալ ըրջանին վերաբերող նյութերը,
հարստացնել այն մարքարդիկնենիզմի կլասիկների՝
Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի պատմական աշ-
խատություններով։ Այս բարորից հետո արգեն դասա-
տուն տվյալ նյութը մեթոդափես պետք է ձեւափորի և
պատմի դաստիառնում, անգաման նյութի (դասի)
հիմքը պահելով դասագրքի նյութը։ Այս ձեռվ դասա-
վանդպող դասը հնարավորություն կտա աշակերտա-
թյան ճիշտ և ամփոփ դադարի կազմել պատմական
տվյալ պրոցեսի մասին։ Դաստիմի ողնությամբ և նրա
տվյալ դասագրքի տվյալ հոդվածը, աշակերտները կա-
նելով դասագրքի տվյալ հոդվածը, աշակերտները կա-
րող կլինեն զատել, յուրացնել առաջատար խնդիրները
և զարդարական հանդիպություններն ու գլուխուր չկորցնել ման-
կաբանությունների մեջ։ Ծրագրի և դասագրքի նման
բաժանության պահպանման դեմքում առաջնատար դե-
միանության պահպանման դեմքում պատմատար դե-
րը պետք է պատկանի ծրագրին։

Վո՞րն և այս ձեփ աշխատանքների հաջողության
գրավականը. ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ վերո-
գրյալ ձեռվ դասը մշակելու համար։ Տվյալ մեթոդով
դրյալ ձեռվ դասը մշակելու համար, ամենից առաջ ան-
հաջողությամբ պարապելու հուրսից առաջ
հրաժեշտ է, վոր մեր դասաւունները կուրսից առաջ
մանրամասնորեն ծանոթանան ամրոջ դասընթացի
մանրամասնորեն ծանոթանան դասագիրքը և ըստ
հետ, ուշի ուշով ուսումնասիրեն դասագիրքը նյութերը, ապա լրաց-
ծրագրի դասագրքեն դասագրքի նյութերը, ապա լրաց-
նելով այլ սժանդակ ձեռնարկներից և մենագրություն-
ներից ընտրած փաստերով ու նոր նյութերով, մարդ
սիզմիկնենիզմի կլասիկների առույթների հիման վրա
մշակելու անդամն յենթարկեն յուրաքանչյուր դա-
վերջնական մշակման յենթարկեն յուրաքանչյուր դա-

որ։ Այս նոր ծրագրով պարապելիս դասաւուն մշտապես
կարիք ունի պահանջվող նյութի կեսից ավելին ձեռք
բերել այլ աղբյուրներից, ըստ վորում ամեն մի դաս
պատրաստելու պահանջը դառնում է նրա համար կեն-
սական ինդիր։

Այժմս այն մասին, թե ինչպես կազմակերպել աշա-
կերտների ինքնուրույն աշխատանքը. սա նույնպես կա-
րեոր ինդիր է։ Պատմության դասաւուն մասնավորա-
պես հրաժան պատմության մեջ
պարզացնի դասագրքից և գրավորներից ոգտվելու ու-
նակությունները։ Կուրսն անցնելուց առաջ առաջին
3—4 դասերի նյութերի վրա, դասաւուն ցույց է տա-
լիս թե ինչպես պետք է կարդալ և աշխատել դասագրը-
քով, ընդվորում այստեղ ամենից առաջ ցույց է տըր-
գում թե վորն է նյութի առաջատար թելը. Հենց այս
հարցը, ինքը ձեւակերպելուց հետո այն գրում է գրա-
տախտակին, իսկ աշակերտներն արտադրում են իրենց
տեսրակներում, վորից հետո դասատվի ողնությամբ
հենց տեղն ու տեղն աշակերտներն իրենք կաշխատեն
գտնել պատասխանները։ Դաստիուն տեղն ու տեղն ել
ուղղում է սխալները, նրանցից մի քանին ընդհանրա-
ցնելով գրատախտակի վրա, իբրև համատարած սխալ-
ների նմուշ, վորից հետո աստիճանաբար այդ աշխա-
տանքը փոխադրվում է տանը և իրենք աշակերտները
փորձում են արդեն ինքնուրույնաբար գրի առնել գրքի
կարեոր մոմենտները և վերաբարդը նրանց պատաս-
խանները։ Սա քիչ ժամանակ կիվի, յեթե միայն հար-
ցերը սահմանափակվեն ամենակարևորագույններով։
Դասարանում տրված պատասխանները բանավոր կեր-
պով ստուգելիս դասաւուն ամփոփում է այն, ապա
ուղղում այս կամ այն սխալը, կոնկրետ կերպով ցույց
տալով աշակերտությանը թե ի՞նչպես, դասագրքի
տվյալ դասի նյութի վո՞ր հատվածի կամ եջի ողնու-
թյամբ գտավ այդ պատասխանը։ Ճիշտ այդ ձեռվ ել
պետք է կազմակերպել նկարների, քարտեղների և այլ

զննական իրերի շուրջը տարվող աշխատանքները:

Հարկավ կենդանի, հետաքրքիր և աշխույժ դաս կազմակերպելու համար հանձնարարվող վերոգրյալ մեթոդը չի բացասում ամենեին այլ ակտիվ մեթոդների գործադրումը: Պատմական նյութը չափազանց բազմազան է, այդ բազմազանությունն իրա մեջ ընդգրկում է պատմության յուրաքանչյուր դասագիրքը: Նա բովանդակում է գաստկարգային պայքարի վիթխարի շղթայի այլ այլ հանդույցները, պատմական պրոցեսի շարժիչ ուժերի անալիզը, պատմական փաստաթղթեր, պատմական իլյուստրացիաներ և քարտեզներ, և ահա այս հանդամանքն ինքնին պայմանավորում են նաև բազմապիսի ակտիվ մեթոդների գործադրում, մեթոդներ, վորոնք կնպաստեն տվյալ նյութի հաջող վերարտադրման և յուրացնելու գործին:

Այժմս մի քանի որինակներով պարզենք թե ինչպես է հարկավոր ոգտագործել դասագիրքը տարբեր դասարաններում:

Հինգերորդ դասարանի կուրսից վերցնենք թեկուզ 86 «Արենական ստրկատիրական դեմոկրատիան»—«Եկումակու դասագիրք»: Այս հատվածը համապատասխանում է ծրագրի «Ստրկատիրական դեմոկրատիա խաղաքական կարգը Արենակում» թեմային: Դասառուն այս յենթագլուխի բովանդակությունը մի քանի հարցերով առանձնացնում է, ապա զատում դրանցից կարենարով առանձնացնում և առաջարկ հարցերը և աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում հենց այդ հարցերի վրա: Վերոգրյալ ամրող յենթագլուխը կարելի յե ընդգրկել հետեւյալ հարցերում՝

1) Ստրկատիրության դարձացումն Աթենքում ինչ աղդեցություն ունեցավ գյուղացիության և արհեստավորների վիճակի վրա. 2) ինչու աթենական իշխող դասակարգերի համար գլխավոր վատանգ պետք են հանդիպանար քաղաքներում համախմբված հողազրկված գյուղացիների և արհեստավորների միացյալ միացյալ մասսայի աշխատեցումը:

3) Պերիկլեսի ձեռքով քաղաքական ինչ ուժորմներ կիրառվեցին և հոգուտ վոր դասակարգերի: Այս յերեք հարցերից առաջատարն ու հանգուցայինը հանդիսանում է յերրորդ հարցը, վորի շուրջը համապատասխան փաստաթղթերի և իլյուստրացիաների ոգնությամբ պետք են մշակվի նաև գրավոր աշխատանքը: Մինչ այդ, աշակերտներն արդեն սովորել ենին Աթենքում տեղի ունեցող դասակարգային պայքարի ետապները, ընդվորում նոր միայն յուրացված հարցը յեզրափակումն են նախորդ շրջանի, և պատմական վորոշ եպօսայի ամփոփումը: Այս իսկ պատճառով դասառուն տվյալ նյութը պատմելու ընթացքում յելնում են աշակերտների համար արդեն ծանոթ նյութից և առանձնապես մանրամասն և ուշադիր բացատրում յերրորդ հարցը, այս կապակցությամբ առանձին ուշադրություն դարձնելով առաջին հայացքից անհարիր թվացող ստրկատիրություն և դեմոկրատիա բառերի վրա ու մեկնաբանում նրանց դասակարգային բովանդակությունը: Այս ավելի քան ցայտուն կերպով կարելի յե ցույց տալ Պերիկլեսի կատարած ուժորմի որինակով, յերբ քայլայլած արհեստավորները և հողագուրկ գյուղացիությունը մասնակցություն բերին ստրկատիրական պետության գործերում պետական գումարներից վարձատրվելով: Այնուհետև դասառուն ընդգծում են աթենական պրոլետարիատի և ժամանակակից ինդուստրիալ պրոլետարիատի տարրերությունը: Այս ձեռվ աշակերտությունը պարզ և հասուակ պատկերացում կունենա աթենական ստրկատիրական պետության մասին և այլևս նրա համար տարրինակ չի հնչի դեմոկրատիա և ստրկատիրություն բառերը: Դասառովի առաջարկով աշակերտներն առանձնապես ուշադրությամբ պիտի կարդան 190 եջի յերկրորդ պարբերությունը, այնքան վորքան աշակերտներն այս պարբերության մեջ կպանեն թեմայի անհրաժեշտ պատասխանը: Նյութերի մշակման դեպքում անհրաժեշտ են լիովին ողտագործել դասագրքի այդ շրջանին վերաբերող նկար-

ները (նկար 45՝ ստրուկները հանքերում աշխարտելիս, նկար 47՝ դարբինն աշխատանքի ժամանակ, նկար 49՝ ձիթենի հավաքելիս), նկարներ, վորոնք պատկերացնում են ստրի, գյուղացու և արհեստավորների աշխատանքը:

Առանձնապես կարեոր ե ակադեմիկ Նիկոլսկու դաստիքի նյութերի մշակումը, վորովհետեւ այս դաստիքի բնիքն ունի մի շատ աչք ծակող պահասություն, ինչպես նախորոք նկատեցինք, նա դժվար է ու բարդ 5-րդ դասարանի տարիք ունեցող աշակերտների հարմ և այս ժամանակից հարցում աշխատանքը հարմ և այս ժամանակից հարցում աշխատանքը:

6-րդ դասարանի կուրսից վորեե թեմա մշակելու իր որինակ կարելի յե վերցնել (Դասային միապետության կազմակերպումն Անդլիայում) (§ 19.—Կուկով-սկու դասագիրքը): Ծրագիրն ամենից առաջ խոսում է Անդլիայի տնտեսական զարգացման մասին, մինչ դասագիրքն այս մոմենտի վրա կանգ չի առնում, ըստ վորում հարկադրված անհրաժեշտ նյութերը պետք ե մնանել դասագրքի մյուս հատվածներում: Անշուշտ այս թերություն ե: Այս գեպքում դասատուն ստիպված ե աշակերտաների հիշողության մեջ վերականգնել դասատիպագրի 12-րդ հատվածը, ուր խոսվում է «Գյուղացիության և նատուրալ տնտեսության քայլքայման» մասին 13, 14-րդ դարերում: Այս նյութն աշակերտները սովորել ելին դեռ նւազ թացլորի ապստամբության առնչությունը այդ այսաւուն պարտավոր ե լրացուցիչ թյամբ, բացի այդ, դասատուն պարտավոր ե լրացուցիչ թյամբ: 1) Վորոնք են Անդլիայի Փեոդալական ջատար հարցը, 2) ինչու Անդլիայում Փեոդալները պաշտպանեցին պետական կենտրոնական իշխանության ինչ արտօնությունը, 3) թագավորական իշխանության ինչ արտօնություններն առաջ բերին Փեոդալների և քաղաքացիների

անրագականություն 12, 13-րդ դարերում: 4) ինչ պատճառներ առաջ բերին 1215 թ. հեղափոխությունը. 5) ինչ բան է «Ազատությունների Մեծ խարտիան» և ինչ նշանակություն ունի նա Անդլիայի պատմության համար. 6) Փեոդալների և քաղաքացիների պատմությունների պաշտպանության համար ինչ հաստատություններ ստեղծվեցին. 7) 13-րդ դարում Անդլիայում տեղի ունեցող դասակարգային պայքարի հիմնական բովանդակությունն ինչի մեջ ե կայանում. 8) ինչ բան է պարլամենտը և ինչպես նա կազմակերպվեց 13—14-րդ դարերում: Յոյց արված 8 հարցերից առաջատարը հանդիսանում է 5-րդ հարցը— «Ազատությունների Մեծ Խարտիայի» մտսին. ահավասիկ Խարտիայի շուրջը տեղի ունեցող դասակարգային պայքարի պատմությունն ել պիտի դասատաթուղթն ավելի ընդարձակել և ավելի հիմնավոր ձևով պարզաբանել, կանգ առնելով Սիմոն-Դե-Մոնֆորի հանուն ազատությունների իրազործման տարած պայքարի և նրա վողրեզական անկման վրա քաղաքացիական կոխմաներում: Դասագիրքը բավականաչափ բնորդում է Անդլիայի պատմության առանձնահատկությունը, առեւթիւնի և արհեստների ուժեղ զարդացումը և լուղունի դերը: Հենց այս հարկադրեց Փեոդալներին համաձայնության գալ քաղաքների հետ, վորի հետեանքով ել առաջ յեկավ «Ազատությունների Մեծ Խարտիան», քաղաքապատության և խոշոր քաղաքներին պարլամենտական ներկայացուցիչներ տալու մասին: Դասագրքի գնահատելի մոմենտներից մեկը հանդիսանում ե յուրաքանչյուր հատվածի վերջում կրկնողության համար բերված հարցերը: Այնքան, վորքան մենք այսեղ գործ ունենք քիչ ավելի հասունացած աշակերտների հետ, հարցերի քանակը կարելի յե հասցնել մինչև 6-ի, բայց անպայման առաջատար հարցի մատ-

Նաև շուշով: Ճիշտ այդպես ել պատասխանները պետք են տրվեն ավելի լայն: Հաջորդ հատվածը (գասային միապետությունը ֆրանսիայում) հնարավորություն և տալիս արդեն ընդհանրացումներ անել և ցույց տալ, վորայիլ պրոցեսը միայն անդիմական յերեսույթ չեր, այլ ուներ ընդհանուր բնույթ: Ի դեպ կուկովսկու դասադրքի նյութերը դասավորված են Հակոռակ ուղղությամբ, այն և նոխորոք արդում է ֆեոդալիզմի ընդհանուր բնութագիրը, այնուհետև միայն շատ թեթևակիորեն կանգ առնում առանձին յերկրների ֆեոդալիդացիայի պրոցեսի վրա: Հարկավ սա թե մեթոդապես և թե մեթոդոգիորեն ճիշտ չե: Այստեղ արդեն և ծրագիրը և դասագիրքը զգալիորեն տարրերվում են մյուս դասարանների կուրսերի համաչափությունից: Բացի այդ կուկովսկու դասագրքի նյութը շատ ցաք ու ցրիվ և ու բազմազան: Դասաւրգում կան քաղաքացիներ այլ և այլ վաստաթղթերից, ստատիստիկական տեղեկություններ և այլն: Նկարներն այստեղ ավելի վատ են քան Նիկոլսկու դասագրքում, ավելի շատ են ժամանակակից նկարիչների ազատ գործերը քան պատմական իսկական նկարները և իլյուստրացիաները, բայց յեղածքաբեզներն ու պլանները կարելի յե ոգտագործել և նրանց որինակով կոնկրետ կերպով ցույց տալ մի շարք պատմական դեպքեր, ինչպես որինակ ցանկապատման ելուրյունը և այլն:

Մյուս դասարանների համար գնալով նյութն ավելի քան բարդանում ե, ինչպես բովանդակության և նույնպես և՝ յեղբակացությունների տեսակետից, այս իմաստով ել պետք է լայնացնել նյութի մշակման շրջանակները, մշակման անալիզն ավելի քան խորացնելով, վեր հանելով այն կապը, վոր կա պատմության անցյալ կյանքի և ներկայի միջն, կոնկրետ նյութի մշակման ոգնությամբ ուժեղացնելով դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի տարրերը:

Այժմս մի քանի որինակ 7-րդ դասարանի կուրսից:

Վերցնենք թեկուզ «Առաջին գյուղացիական պատերազմը Ռուսաստանում 17-րդ դարում» թեման— Մ. Ն. Պակրովսկու դասագրքի «Գյուղացիական հեղափոխություն» գլուխը: Այս թեմայի բովանդակությունը կարելի յե բաշխել հետեւյալ հարցերի վրա.

1) Ինչ դասակարգեր ոգնեցն ինքնակոչ Դիմիտրին ուսումնականության գահը. 2) ինչումն և կայանում բուրժուատիկան լեզենդայի իմաստն ինքնակոչ Դիմիտրի մասին. 3) ինքնակոչ Դիմիտրը հոգում ուսուցիչության ինչ ուկազներ հրապարակեց. 4) ինչում բացատրել ինքնակոչ Դիմիտրի անկումը. 5) գյուղացիության հիմնական մասսան ինչպես գնահատեց բոյարական-վաճառականական թագավոր Վասիլի Տույսկոյի յերեան գալը: 6) ով եր Բոլոտնիկովը և ինչումն եր կայանում նրա ծրագիրը. 7) ինչու յերկու գործություն ունեցին մեկը Մոսկվայում. մյուսը՝ Տուշինոյում. 8) ինչ դասակարգային բովանդակություն ուներ Մոսկվայի բոյարության կնքած գաշինքը լեհական թագավորի հետ 9) ինչպես եր նա հեղափոխական պրուզավանդ տանում. 10) Բոլոտնիկովի շարժման պարտության պատճառները. 11) ինչ դասակարգային բովանդակություն ուներ Նիժնի Նովգորոդի պահեստի բանակը, ում ներկայացուցիչն եր իրեն թագավոր ընարված Միխայելը, Տուշինոյի պատրիարքի տղան, վորն եր Ռոմանովների թագավորության դասակարգային բովանդակությունը): Վերոգրյալ հարցերից հանգույցայինը հանդիսանում է «գյուղացիական պատերազմը 17-րդ դարում» կետը և նրա առաջնորդ Բոլոտնիկովին վերաբերող հարցը: Հենց այս հիմնական հանգույցային հարցերի շորջն ել պետք է տարվի նյութի ուսումնասիրությունը: Մ. Ն. Պակրովսկու դասագրքը դասաւորին հնարավորություն և տալիս աշակերտության համար պարզ և մեկին դարձնել բուրժուատիկան պատմագրության լեզենդի իմաստը, վոր իրը



թե Դիմիորի ինքնակոչը յեղել և Անհական կալվածատերերի և կաթոլիկական յեկեղեցու տեղագիրը. (Տաւունիկ) նույն ճանապարհով դասատուն, Հնարավորություն ունի պարզել նաև Ռոմանովների մասին յեղած լեզենդան, վոր գեռ վոչ շատ առաջ, նույնիսկ խորհրդային իշխանության որերին այնպես հաճույքով տարածում եր նախկին ակադեմիկ Պլատոնովը :

Մ.Ն. Պակրովսկու տված բոլոր մեկնարանություններն ընթերցողի առաջ լայնորեն բաց են անում գյուղացիական հեղափոխության պատճառները 17-րդ դարում, վեր հանում տնտեսական ու քաղաքական այն կրիզիսը, վոր պետք ե հանդեր դրան։ Դասագիրքը տալիս է շարժման վողջ ծրագիրը, վորի կարևորագույն կետերը աշակերտները գրի պիտի առնեն իրենց գույն հետերը աշակերտները գրի պիտի առնեն իրենց գույն կետերը աշակերտները տալիս է համեմատելու գառերակներում, հետագայում այն համեմատելու գառերակներում, իվր գյուղացիական պատճերագմի ծրագրի հետ։ Այս իվր գյուղացիական պատճերագմի ծրագրի առնչությամբ Մ.Ն. Պակրովսկու գասագրքի խնդրի առնչությամբ Մ.Ն. Պակրովսկու գասագրքի համար լրացուցիչ նյութ տալիս է Կուկովսկու գտառքիրքը (§ 47)։ Վերջապես վերև հիշված հարցերին պետք է ամելացնել մի խնդիր ևս, վորն առանձնահատուկ է գյուղացիական բոլոր շարժումների համեզ հայտնի գյուղացիական բոլոր շարժումների հողմից մըշմար, — դա ապատամբած գյուղացիների կողմից մըշմար, — դա ապատամբած գյուղացիների միջից իրենց համար առապես ուրիշ դասակարգերի միջից իրենց համար առավանդութ, առաջնորդներ վնարելն ե։ Կուկովսկու գտառքանդարձ, առաջնորդներ վնարելն ե։ Կուկովսկու գտառքանդարձ, առաջնորդների վնարելն ին Պատագիրքը ցույց է տալիս այն գերը, վոր խաղացին Պատագիրքի մաս, ստեղծելով կովն ու Լյապունովի Բոլոտնիկովի մաս, ստեղծելով այնպիսի գրություն, վոր հիշեցնում եր այն ինչ տեղի տայնեցալ Գերմանիայում — գյուղացիական մեծ պատնեցալ Գերմանիայում — գյուղացիական մեծ պատնեցալ Գերմանիակ, յերր ազնվականությունից գժգուներազմի ժամանակ, յերր ազնվականությունից կամ Բիրլիսինդեն) առանձին խմբեր (ֆոն Զիլինդեն կամ Բիրլիսինդեն) ժամանակավորապես պաշտպանեցին գյուղացիական ժամանակավորապես պաշտպանեցին գյուղացիական արժման թույլ կողմր, իր շարքերից գյուղացիական շարժման թույլ կողմր, իր շարքերից յելած սեփական առաջնորդների, սեփական ավանդագիրքի, սեփական պատեղագիրքի բացակայությունը և գյուղացիական պատճեռությունը :

բաղմների անխուսափելիությունը մինչև այն մոմենտը, յերբ նա գտնում է իր առաջնորդին՝ հանձին պրոլետարիատի։ Կարեռ է այստեղ հիշատակել և այն, վոր գասագիրքը քննում է գյուղացիական պատերազմի խնդիրը նուսասատանում վոչ թե առանձնացած, կղզիացած ձեռվ, այլ Արևմտյան Յեվրոպայում տեղի ունեցած յերևույթների կապակցությամբ։ սրանով իսկ մերկացվում է բուրժուական լեզենդայի թեզը նուսատանի ուրույն պատճական ուղիով զարգանալու մասին, վոր իրը թե հիմնականում պետք է տարբերեր նրան Արևմտակարտպական ուղուց։

Վերևում թվարկած նմուշների համաձայն դասագրքի նյութերի ոգտագործումը հնարավոր ել միայն այն դեպքում, յերբ գասատուն իր մանկավարժական աշխատանքների պրոցեսի ընթացքում բազմակողմանիուրեն կուտամնասիրի իր ձեռքի տակ յեղած դասագիրքը, վորը և նրան կրերի գասագրքի անհրաժեշտ գնահատականին։ Դասատուների համար իրեր այդ աշխատանքների ուղղեցույց ստորև բերում կենք 'հետեւյալ հարցերը, վորով և պետք ե զեկավարվել։

1) Դասագրքի կապը ծրագրի հետ։ Դասագրքում կոնկրետացվում էն արդյոք ծրագրում նշված պատճական դեպքերն ու պատճական պրոցեսը և վո՞ր շափով։ Վո՞ր շափով են համընկնում իրար ծրագրի և դասագրքի հանգուցային հարցերը։

2) Դասագրքում տրված են արդյոք մարքսիզմի, լենինիզմի կասմիկների գրույթները պատճական դեպքերի պրոցեսի մասին (որինակ Աթենական ստոկատիրական դեմոկրատիայի թեմա մշակելիս այն հիմնե՞լ են Լենինի գրույթների վրա, իսկ 1917 թ. հեղափոխությունն անցնելիս այն հիմնված է ընկ. Ստալինի ցուցմունքների (տես «Լենինիզմի հարցերը») վրա 1917 թ. նուսաստունի յուրահատուկ դրության մասին, և այլն և այլն։

3) Դասագրքում տրված է սիստեմատիկ կուրս և

այդ կուրսում արտացոլվո՞ւմ ե ճնշվածների պայքարի իրենց ճնշողների գեմ:

4) Դասագիրքը խոսո՞ւմ ե դասակարգային պայքարի մասին ավալ ժամանակի կոնկրետ գործիչների գործունեյության և զեկավարման կապակցությամբ:

5) Դասագրքում վո՞ր չափով ե վերհանված այդ պայքարում քաղաքական կուսակցությունների խաղած գերն ու նշանակությունը:

6) Դասագրքում տրված ե ավալ հասարակության արտագրողական ուժեղի պարզ և կոնկրետ պատկերը և նրանց շարժման որենքները և արդյոք դասագիրքն այս խնդրում չի՞ ընկնում սխեմատիզմի մեջ:

7) Դասագրքում ցուցահանվո՞ւմ, վերլուծվո՞ւմ են արդյոք նախընթաց պատմական և պոխաների դասակարգային պայքարի միակողմանիությունը՝ ընդհուպ քինչեւ արդյունաբերական պրոլետարիատի առաջնալը:

8) Դասագրքում կոնկրետ որինակներով մերկացվո՞ւմ են իդեոլոգիաների դասակարգային ընույթը դասակարգային հասարակության մեջ:

9) Դասագրքում ցուցահանվո՞ւմ ե մարքսիզմի լենինիզմի գերն ու նշանակությունը, վորակս մի ուսմունքի, վորը բացատրում ե մարդկային հասարակության գարգացման որենքները և սովորեցնում պրոլետարիատին վերափոխել աշխարհը:

10) Դասագրքում տրված են պատմություն իսկական որինակներ և նրանք արդյոք որդանապես կապվո՞ւմ են միջազգային պրոլետարիատի կողմից հանուն կոմունիզմի մղած ժամանակակից դասակարգային պայքարի դրվագների հետ:

11) Դասագրքում բավարար չափով տրված ե պատմության ժամանակագրական հաջորդականությունը, ստատիստիկական ավալներ, այնտեղ խոմ չկտն եկոնոմիկական մարդանքներ և վո՞րքան նրանք կենդանի թվեր են. այսինքն, պատկերում են նրանք արդյոք

դասակարգային պայքարի խնդիրներ և վո՞ր չափով մեթոդապես ճիշտ են հիմնավորված:

12) Դասագրքում ինչպե՞ս ե տրված հաստաթղթային մասը և ինչպես պետք ե ոգտագործել փաստերի տվյալները նյութերը նրանց միջոցով հիմնավորելու մեր թեզը:

13) Դասագրքում ինչպե՞ս ե տրված պատմական քարտեզը և ի՞նչպես պետք ե ոգտագործել այն:

14) Դասագիրքը հարուստ ե իլյուստրացիաներով (նրանց բնույթը) և ինչպես պետք չե ոգտագործել նրանց:

15) Դասագրքի պատմողական լեզուն (վոճը, տերմինուրգիայի խնդիրը և այլն) ինչ բնույթ ունի:

Ահա այս հարցերի ոգնությամբ մգակելով դասագրքը և նրանց պատասխանները այլ աղբյուրներից ձեռք բերելով դասատուն հարավորություն կունենա մինչեւ նոր ծրագրով լույս տեսնող դասագրքեր ձեռքի տակ ունենալը բավարար աստիճանի վրա դնել պատմության ուսուցումը մեր դպրոցներում 34—35 ուս. տարեշրջանում:

Մանկավարժական բանֆակները տպագրված նոր ծրագրով առաջնորդվելիս այն պետք ե բաշխեն հետեւյալ կերպ՝

5-րդ և 6-րդ դասարանի կուրսը նրանք պետք ե անցնեն 1-ին կուրսում, 7-րդ և 8-րդ (արդյունաբերական կապիտալիզմի եպօխան նոր պատմությունից) 2-րդ կորսում. իսկ իմպերիալիզմը (նոր պատմությունից) և ԽՍՀՄ-ի պատմությունը 3-րդ կուրսի I սեմեստրում, 3-րդ կուրսի II սեմեստրում լսելով Գաղութային և կիսագաղությերին և Հայաստանի ու Անդրկովկասի պատմությունները:

Դասասունների համար իբրև լրացուցիչ ձեռնարկներ հանձնաբարվում են.

ՄԱՐՔԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԿԼԱՍԻԿՆԵՐԻՑ (ՀԱՅԵՐԵՆ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ)

- 1 կ. Մարքս, Ֆ. Ենգելս-կոմունիստական մանիֆեստ
- 2 » » Լուի-Բոնապարտի Բրյումերի 18 կ.
- 3 » » Կապիտալ հատոր գլուխ 24
- 4 » » Գոթայի ծըադրի քննադատությունը
- 5 » » Քաղաքացիական պատերազմը Թրանսիայում
- 6 » » Քաղաքատնտեսության քննադատության շուրջը
- 7 Ֆ. Ենգելս Ըստանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը
- 8 Ֆ. Ենգելս Սոցիալիզմի զարգացումը ուսուակայից դեպի գետությունը)
- 9 Ֆ. Ենգելս Գերմանական գյուղացիական պատերազմը
- 10 » » Բանվոր գասակարգի գրությունը Անգլիայում
- 11 Վ. Ի. Լենին. Ըստիր յերկերի վեցհատորնակը (լույս տեսաձները)
- 12 » » Յերկերի ժողովածու հատոր
- 13 Ի. Վ. Ստալին Լենինիզմի հարցերը
- 14 » » Ազգային հարցը

ԶԵՐՆԱՐԿՆԵՐ

1. Մ. Ն. Պակրովսկի Ռուսաց պատմության ամենահամառությունիցին 1, II և III մասերը
 2. Պրոֆ. Վիպեր Լ. Դասագիրք հին պատմության II Միջին դարերի համառություն, III նոր պատմություն
-

1. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

5-ՐԴ ԳԱՍՏՐԱՆԻ ՀԱՄԱՐ (120 ԺԱՄ) .

Ներածություն (4 ԺԱՄ) .

Վորուելից ե ձեռք բերվում իմացումը մարդկանց անցյալ կյանքի մասին. պեղումներ և հնագիտական նյութեր. հնագույն հիշատակարաններ ու արձանագրություններ. Պատմական և գրական արտադրանքներ ճանապարհորդություններ և ազգագրական նյութեր, հեքյաթներ և ժողովրդական զրույցներ. Թանգարան: Ինչպես ե հաշվվում ժամանակը պատմության մեջ:

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ (35 ԺԱՄ) .

1. ՅԵԳԻՊՏՈՍ (10 ԺԱՄ)

§ 1. Յեգիպտոսի թնությունը և ջրային կառուցումները. — Յեգիպտոսի կլիման: Նեղուը և նրա տարեկան հորդումները: Հորդումների կարգավորման անհրաժեշտությունը: Ամբարտակներ և պատնեշներ (հողեթմբեր): Ջրանցքներ և արհեստական լիճ. Մորիտովութիւնը:

§ 2. Վիթխարի բուրգերի կառուցումներ. — Յեգիպտական պետության առաջացումը. Փարավոններ և նրանց արքունիքը: Ստրուկներ: Գյուղացիությունը և նրանց ունեցած պարտավորությունները: Խուֆույի բուրգի կառուցումը: Խեֆրենի բուրգը և սՓինքը: Քաղաքներ բուրգերի շրջանում: Ժողովրդական ցասումը ընդդեմ փարավոնների:

§ 3. Յեզիպտական կուլտուրան.— Հիյերողլիֆների գրությունը և նրանց վերծանումը: Կրոնը: Արվեստը: Գրականություն: Ժողովրդական յերգեր, հեքյաթներ, ասութներ, (նավախորտակման հանդիպած Սինուխեթը): Վարդապետություն (ուսմունք):

§ 4. Գյուղացիների և ստրուկների ապստամբությունները, գյուղացիական Անդափոխությունն ըստ ինպուլերի: Հյուքսոսների արշավանքը և նրանց տիրապետությունը Յեղիպտոսի վրա:

§ 5. Նոր քաջավորություն Յեզիպտոսում.— Հաքմոսը և Հյուքսոսների վտարումը: Փոփոխություններ հասարակության և պետության կազմում: Կառավարչությունը: Ռազմական կազմակերպություն: Գյուղացիության դրությունը:

§ 6. Փարավոնների նվաճողական արշավանքները.— Տուտմոս 3-րդ և նրա արշավանքները: Ստրկության առումը: Հարստության կուտակում Ամոնի տաճարի և այլ տաճարների կողմից: Թագավորական առեւտուր. նրա մենաշնորհյալ բնույթը: Առեւտրական կայաններ: Առեւտրի կարգը: Հանդսեպսուգի եքսպեդիցիան: Յեղիպտոսի արտաքին հարաբերությունները:

§ 7. Ամենխոդին IV (Եխնադոն) և նրա ուժիորմները.— Տաճարների տիրապետություն: Ամոնի տաճարի գերը: Տարբեր տաճարների քրմերի միջև յեղած հակամարտությունը: Ամենխտանդոնի և նրա կնոջ անձնավորությունը: Կապը նոր ռազմական արիստոկրատիայի հետ: Պայքար հին իշխանական դասերի և քրմերի դեմ: Աղոնների նոր պաշտմունքի վերականգնումը. քրմական հին դասի ընդդիմագրությունը: Տաճարների փակումը և նրանց հողերի բռնագրավումը:

Նոր մայրաքաղաքը, հուզումներ Եխնադոնի և նրա գինաստիայի (հարստություն) դեմ: Խորիմիեպը և հին կրոնի վերականգնումը:

§ 8. Ռաման || և նրա պայքարը հիթիթների դեմ.— Հիթիթական թագավորություն. պատերազմը հանուն Սիրիայի: Պայմանագիր Հանդուշիի հետ:

§ 9. Նոր քաջավորության վախճանը.— Պայքար «ծովային ժողովուրդների» համար:

Պաղեստինի և Սիրիայի կորուստը: Ներքին պայքարը. շահագործողների շարժում: Պայքար քրմերի և ռազմիկների միջև: Յեղիպտոսի անկումը: Ֆինանսական թեոկրատիան: Արշավանքներ թեփեյի վրա:

§ 10. Սահյան փարավոններ.— Պատեղին, Նեխոն, Առեւտրի աճումը հարաբերություններ Փյունիկիայի և Հունաստանի հետ:

2. ՄԻՉԱԳԵՏՔԻ ՀՆԱԳՈՒՅՑՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (8 ժամ).

§ 1. Հարավային Միջագետք. Նրա բնությունը և քնակչությունը.— Կլիման և յերկդեռյան հովիտ լինելու պատճառները: Սումմերներ կամ չումմերներ և Սումմերական համայնքը: Ջրային կառուցումների սիստեմը:

§ 2. Սումմերական իշխանություն.— Նրանց կառավարչության ձևը: Աստվածներ, քրմեր և տաճարներ: Տաճարային տնտեսությունը: Ստրուկներ, գյուղացիների և արհեստավորներ: Պարտապանային ստրկություն (ստրուկներ պարտքերի դիմաց): Գյուղացիների և արհեստավորների ապատամբությունները: Աւրիակին:

§ 3. Սումմերի և Ակադայի քաջավորությունը.— Սեմիտները Ակադիայում: Շարուկին և նրա հաջորդները. նրանց հավաքման—միավորման քաղաքականությունը: Շարուկինի նվաճումները: Ներքին առեւտրի զարգացումը: Նոր ջրանցքներ: Ակադական գինաստիայի անկումը և Աւրայի թագավորությունը: Ելամի նվաճումները:

§ 4. Բարելական քաջավորության հիմնադրումը.— Ամորիդներ և նրանց ներս խուժումը: Բարելոնի

դրավումը և բարելական թագավորության կազմակերպումը. նրա աստիճանական ընդարձակումը և ուժեղանալը:

§ 5. Համմուրարի թագավորը և նրա որենքները. — Համմուրարին, վորապես բարելական թագավորության վերջնական կազմակերպման իրականացնողը: Հասարակական կարդեր, խոշոր հողատերեր. մանր կարմածատերեր, քիմությունը, վաճառականներն ու արհեստավորները, դյուզացիոնությունը և ստրուկները: Համմուրարիի որենքները: Թագավորական վարչությունը և դատարանը բարելական թագավորության մեջ:

§ 6. Բարելոն քաղաքը և բարելական առևտուրը. — Քաղաքի պատկերը. նրա կենցաղը: Առևտուրի պատկերը — շովան Բորսիպոյում: Եքսպեդիցիաներ և Հարաբերություններ այլ յերկրների հետ: Նախադնացություն: Գործիքներ և փաստաթղթեր: Քրմությունը. Վաշխառությունը:

§ 7. Բարելական կուլտուրան. — Սումմերների գերրարելական կուլտուրան ստեղծելու գործում:

Մելազիր արձանագրությունները և նրանց վերծանումը: Մարդուկ աստվածը և ուրիշ աստվածներ: Գրականություն: Եպոս աշխարհի ստեղծագործության մասին. Եպոս՝ առաջին մարդկանց մասին: Եպոս՝ Հելզամին: Եպոս՝ մասին: Աստղաբաշխություն, աստղագիտության և մաթեմատիկայի սկզբնավորությունը: Բարելական կուլտուրայի տարածումն և ունեցած ազդեցությունը:

Յ. ԱՍՍՈՐԵՍՏԱՆ, ԽԱԼԴԵԱՆ ՅԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (8 ժամ).

§ 1. Ասորեստանի յերկիրն ու բնակչությունը.

§ 2. Ասորական մեծ նվաճումների դարաշրջան. — Դուռը թիւ — I և IV ու նրանց հաջորդները: Ասորական թագավորների արշավանքները Վանիան Բիանիայի (Վանի) թագավորությունը: Զորքի և բանակների կադ-

մակերպումը: Մազմական տեխնիկան: Հաշվեճարդաբարպարփած ժողովրդների հետ:

§ 3. Խորայելի և Հրեյաստանի թագավորությունը. — Փյունիկիա: Նրա սկզբնական համառոտ պատմությունը: Դավիթ և Սողոմոնը: Պառակտում Սիամում: Սոցիալական ճգնաժամ Յ-րդ դարում: Մարդարեներ: Գյուղացիական շարժումներ: Պայքար Ասորեստանի դեմ և Խորայելի յերկիրի անկումը:

Փյունիկյան քաղաքներ, առևտուր և գաղութային քաղաքականությունը: Այրուբենը:

§ 4. Ասորական ուղմական տերությունը. — Կազմը: Վարչությունը. Հարկերի հավաքումը: Ասորական գաղութներ: Հպատակների արտաքսումը: Առևտուրը. — Բարելոնի առանձնահատուկ վիճակը: Հպատակ Գյուղացիների և ստրուկների ապստամբությունը:

§ 5. Ասորեստանի անկումը. — Խալդեա և Բարելոնը. Խալդիական թագավորության հիմնադրումը: Խարեմիտանիներ, սրանց զաշինքը խալդերի հետ: Նինվեյի կործանումը և Ասորեստանի անկումը. Մեղիական թագավորությունը:

§ 6. Ասորական կուլտուրան. — Բարելոնի ազգեցությունը: Ասուր Բանիպալի մատենադարանը (թագավորական արձանագրություններ) բեվեռագիր արվեստը:

§ 7. Նոր-Բարելական (Խալդական) թագավորությունը Նարուգողանոսորի որոնք. — Նարուգողանոսորի արշավանքները: Հրեյից թագավորություն անկումը: Նոր Բարելական թագավորության կազմը և նրա կառավարչությունը: Առևտուրն ու վաշխառուները: Խոշոր արհեստանոցներ: Ստրկական աշխատանքը: Բարելոնի շինարարությունը:

§ 8. Պարսիկներն ու պարսկական թագավորության կազմակերպումը. — Պարսիկների յերկիրը, կենցաղն ու կրոնը: Համառոտ ակնարկ Պարսկաստանի նախասկզբանական շրջանի պատմության մասին մինչև Կյուրոսը:

§ 9. Պարսկական մեծ տերությունը. — Կյուրոսը,

կամբյուզը և մեծ տերության հիմնադրումը: Սրա կազմը և կառավարությունը: Առևտուր: Դրամական սիստեմը: Ճանապարհներն ու փոստը, թագավորական գանձարան: Թագավորական մայրաքաղաքը և թագավորական արքունիքը (պալատը):

4. ՀՆԱԳՈՒՅՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ (4 ժամ) .

§ 1. Հնագույն Հնդկաստանը.— (2500—1200 մէր թ. առաջ): Յերկիրն ու բնակչությունը: Դրամիտները—վորպես Հնդկաստանի հնագույն բնակիչներ: Յոթգետյան հովիտը: Հնդիկների տարածումը: Ռաջնոներ, վորպես Հնդկ. համայնքների ավագներ ու զինորական պետեր: Ռինվեդի տվյալները Հնդկաստանի հնագույն շրջանի տնտեսական կյանքի վերաբերյալ: «Տասն իշխանների» պատերազմները: Առասպել Վասոչետի կովի մասին Վիսվամիտրի հետ: Պետություն կազմակերպումը Հնդկական Հովտում: Առաջին հարստություններ՝ Արեգակնային Հովտում: Առաջին հարստությունների և Լուսնային (Ելիվանի): Կամ արեային (Սոտեվանսի):

§ 2. Հնկաստանը բրահմանների տիրապետության որոք.— (2200—500 մ. թ. առաջ) Կուրի և Պենտավների մեծ պատերազմը: Գանդեսի հովտի նվաճումները: Մեծ պատերազմը: Գանդեսի հովտի նվաճումները: Մեծ պատերազմը: Առաջմանների իշխանության գլուխնեսի հովտում: Բրահմանների կաստիներ, Բրահմաններ, անցնելը: «Մանվի ուրենքները: Կաստիներ, Բրահմաններ, Վայսիներ և Սատուրիներ: Ստրկությունը կշտարիներ, Վայսիներ և Սատուրիներ: Ստրկությունը հնագույն Հնդկաստանում:

§ 3. Բուդդայական շարժումը և Հնդկաստանի նըւինումը.— Գյուղացիների և ստրուկների դրությունը: Վանումը: Գյուղացիների և ստրուկների դրությունը: Բաղաքանչարիների պայքարը Բրահմինների դեմ: Քաղաքականացարիների պայքարը 7-րդ և 6-րդ դարերում: Առասպել կան հեղաշրջումներ 7-րդ և 6-րդ դարերում: Առասպել կան հեղաշրջումներ մասին: Բուդդայականությունը ընդդեմ Բուդդայի մասին: Բուդդայականությունը իշխանության անցումն իշխանության գլուխը:

Մահադադայի պետականությունը՝ Պատալիպուտրա կենտրոնով: Մահատիոյի թագավորությունը և նրա ծաղկումը Աշողների եպոխայում: Հնդկաստանի նվաճումը:

5. ՀՆԱԳՈՒՅՆ ԶԻՆԱՍՏԱՆԸ (5 ժամ) .

§ 1. Յերկիրն ու բնակչությունը.— Հնագույն չինական բնակչության յերկրամասը: Տարածումն ու տեղավորումը Խուան-Խե և Չան ցղի-Ցյան գետարերաներում: Այս գետերի աշխարհագրությունը: Գետերի վարարումն և վոռոգման սիստեմը: Նախնասկզբնական դյուղերն այս գետերի հովիտներում: Հողը, անտառը և նրա առանձնահատկությունը:

